


**ՊՐՈՖ. ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**



Օգոստոսի վերջերին Մոսկվայում կայացած արևելագետների համաշխարհային 25-րդ կոնֆերանսին մասնակցելուց հետո, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրավերով Մայր Հայրենիք այցելեց Հարվորդի համալսարանի դասախոս պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսեսյանը:

Հարգելի գիտնականը հայկական մանրանկարչության վերաբերյալ մի շարք դասախոսություններ կարդաց Մատենադարանում և Գիտությունների ակադեմիայում:

Մեպտեմբերի 15-ին, հինգշաբթի օրը, պրոֆ. Տեր-Ներսեսյանը ուխտի եկավ Ս. Էջմիածին և նույն օրը հյուրը եղավ Մայր Աթոռի միաբանության:

Երբ Վեհափառ Հայրապետը հովապետական այցելությամբ գտնվում էր Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում, պրոֆեսորին պարզմատրել է Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի աղամանդակուռ ոսկյա շքանշանով, որպես բարձր գնահատություն արվեստագետի գիտական արժեքավոր վաստակի՝ հայ մանրանկարչության բնագավառում նրա մատուցած անգնահատելի ծառայությունների համար:

Ի պատիվ հարգելի հյուրին Վեհարանում կազմակերպեց մրգասեղան, որին ներկա եղան Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգեությունը և Վերստուգիլ հանձնաժողովը անդամները, Տիրամայրը, և էջմիածին ամսագրի խմբագրական կազմը և վանքի պաշտոնեալությունը:

Հարգելի պրոֆեսորին առաջինը ողջունեց Գերաշնորհ Տ. Մահակ արքապիսկոպոսը, ապա գիտնականի համառոտ կենսագրությունը ներկայացրեց Հոգեշնորհ Տ. Հուակի վարդապետ Մանթուրյանը, Գերաշնորհ Տ. Եղիկ սրբազնը խոսեց ընդհանրապես հայ կող դերի մասին հայ մշակույթի զարգացման բնագավառում, իսկ Հոգեշնորհ Հարություն վարդապետ Մատենցյանը պատմեց իր հուշերը Օրմանյանի մասին, որի քրոջ աղջկն է Հարգելի պրոֆեսորը: «Էջմիածին ամսագրի խմբագիր Արթուր Հատիտյանը խոսեց պրոֆեսորի գիտական, մեծարժեք վաստակի և միաժամանակ օտարներին հայ արվեստը ծանոթացնելու և պրոպագանդելու բնագավառում նրա մատուցած անգնահատելի ծառայության մասին»:

Բարեշնորհ Խորեն և Հակոբ սարկավագները երգեցին հայրենասիրական երգեր:

Ընդունելության վերջում հարգելի հյուրը շատ հետաքրքիր, համառոտ դասախոսություն կարդաց հայ մանրանկարչության առանձնահատկությունների և մանրանկարչական դպրոցների դերի և նշանակության մասին հայ մշակույթի պատմության բնագա-

վառում: Գասախոսությունը լսվեց մեծ հետաքրքրությամբ և գոհունակությամբ:

\*\*\*

Պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսեսյանը ծնվել է 1896 թվականի սեպտեմբերի 5-ին Կոստանդնովուպում, Նախնական կրթությունն ստացել է Եղայան վարժարանում, իսկ 1908—1915 թվականներին Համալիսել է Կոստանդնուպոլիսի անգլիական վարժարանը:

Համաշխարհային առաջին պատերազմին Մ. Տեր-Ներսեսյանը հեռանում է Կոստանդնուպոլիսից և գնում Զվիցերիա ու սովորում Ժընի Համալսարհանում 1916—1918 թվականներին, 1919 թվականին նա մտնում է Փարփակի Սորբոնի Համալսարանը և ստանում հետևյալ դիպլոմները. լիցենցիատ դպրությանց (1920 թ.), դիպլոմ պատմության բարձրագույն ուսմանց (1921 թ.), դիպլոմ բարձրագույն ուսմանց դպրոցի (1925 թ.) և դոկտ. դպրությանց (1936 թ.): Հարգելի պրոֆեսորը 1927—1929 թվականներին դասախոսություններ է կարդացել Սորբոնի Համալսարանում բյուզանդական արվեստի մասին:

Պրոֆ. Մ. Տեր-Ներսեսյանը 1930 թվականին հաստատվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում: 1930—1946 թվականներին նա դասախոսել է Վեսլեյ Կոլեջում, որտեղ 1938—1946 թվականներին միաժամանակ եղել է Գեղարվեստի պատմության բաժնի դիրեկտոր: 1946 թվականից Վաշինգտոնի Հարվորդի Համալսարանի բյուզանդական արվեստի պրոֆեսորն է:

Պրոֆ. Մ. Տեր-Ներսեսյանի գրչին են պատկանում հայ արվեստի և հայ մանրանկար-

շության վերաբերյալ մի շարք ուսումնասիրություններ, որոնցից են հետևյալները.

«Բարաղամի և Հովհանսեփի վեպի նկարագրումը», Փարփակ, 1837 թ., 2 հատոր (Փրանսերեն):

«Վենետիկի Մխիթարյան հայրերի Մատենադարանի ժմբ, ժԴ և ժԴ դարերի հայերեն նկարագրորդ ձեռագրերը», Փարփակ, 1935—1937 թ. թ., 2 հատոր (Փրանսերեն):

«Հայաստան և Բյուզանդական կայսրությունը», Քեմբրիջ, 1946 թ. (անգլերեն):

«Զեստեր-Բիտուի Հավաքածու ծուցակ Հայերեն ձեռագրերի», Դուբլին, 1958 թ., 2 հատոր (անգլերեն):

Հարգելի պրոֆեսորը միաժամանակ սուրագել է բազմաթիվ արժեքավոր հոդվածներ հայ և օտար պարբերական մամուլի մէջ հայ արվեստի մասին: Այդ հոդվածներից են «Հայության մասին» Սաճարի սկզբնական մանրանկարների թվականը (անգլերեն), «Է դարի նկարների մի ապոլոգիա» (Վրթանես Քերթողի «Յաղագս պատկերամարտից» գրության ուսումնասիրությունը) (Փրանսերեն), «Ծժոխքի ավերման մասին ճառերի հայերեն թարգմանությունը» (անգլերեն):

Հարգելի պրոֆեսորը գտնվում է իր ուժերի հասունության և ստեղծագործական թափի մեջ:

Ցանկանալով առողջություն հարգելի պրոֆեսորին, մաղթում ենք, որ նա ապրի երկար՝ նոր և արժեքավոր ուսումնասիրություններով հարստացնելու համար դարավոր հայ մշակույթը:

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՄՅԱՆ

